



ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՆԱՅԱՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՅԻ  
 HOLY TRINITY ARMENIAN CHURCH

RIGHT REV. VAZKEN KESHISHIAN, RECTOR  
 RECTOR'S OFFICE 964-3286

PARISH OFFICE 924-6514  
 AUDITORIUM 923-0081

Փետր. 27, 1981

Գերաշնորհ  
 Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան  
 Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
 նիւ Եորթ.

Սիրելի Արքազան Հայր,

Ձերդ Արքագնութեան փափաքին համաձայն իբրեւ Հոգեւոր Մատակարար Նախագահեցի Թորոնթոյի Ս. Երրորդ. Եկեղեցւոյ Տարեկան ծխական ժողովին, որ տեղի ունեցաւ Կիրակի, Փետրուար 8-ին 115 Տրատու անդամներու մասնակցութեամբ: Եկեղեցւոյս անդամներու թիւն է 335:

Առյն ժողովին մէջ օրինաւոր քուէարկութեամբ ծխական Խորհուրդի անդամ ընտրուեցան հետեւեալ ազգայինները:

Տիարք՝	Սարգիս Չիլինկիրեան	104	Քուէ
	Ղեւոնդ Խոսրովեան	80	,,
	Թորգոմ Զապունեան	63	,,
	Նշան Մանճրլըբեան	63	,,
	Յարութիւն Նսայեան	62	,,
	Յակոբ Երէցեան	61	,,
	Ժոն Յովակիմեան - Մայր	53	,,

Պրն. Ժոն Յովակիմեան պիտի հրաւիրուի ամբողջացնելու համար Պրն. Հրաչ Շիշմանեանի պաշտօնավարութեան շրջանը: Պրն. Շիշմանեան անձնական պատճառներով պիտի չկրնայ շարունակել իր պաշտօնը:

Ձերդ Արքագնութեան թիւ 484 շրջաբերականին համաձայն ներփակ կը ստանաք ծխական ժողովի ներկայացուցած տեղեկագիրները. Հաշուեկշիռը, անդամներուն դրկուած հրաւիրագրէն օրինակ մը, ծխական ժողովի ընտրութեան արդիւնքը - ընտրութեանց քուէաթուղթէն օրինակ մը թեկնածուներու անուններով եւ ստացած



ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՆԱՅԱՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՅԻ  
HOLY TRINITY ARMENIAN CHURCH

RIGHT REV. VAZKEN KESHISHIAN, RECTOR  
RECTOR'S OFFICE 964-3286

PARISH OFFICE 924-6514  
AUDITORIUM 923-0081

-2-

քուէներով, Թեմական Պատգամաւորներու անուները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը, Եկեղեցական կազմակերպութեանց Վարչական մարմիններու Ատենապետներուն անուները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը, Առաջնորդարանէն ղրկուած տեղեկագիրները անհրաժեշտ ստորագրութիւններով եւ ծխական ժողովի ատենագրութիւնը:

Այսու կը խնդրենք Ձերդ Սրբազնութենէն ծխական Խորհուրդի նորընտիր անդամներուն վաւերացումը:

Մնամ Խոնարհաբար աղօթակից

*Երես Լոր. Երեմեան*

Եղիշէ Ժ. Վրդ. Կիզիրեան  
Նախագահ  
Ծխական Տարեկան Ժողովի